

մեղս եւ փցունս ի գրչաց Աբրահամ... յանձն առեալ կատարեցի... գրեցաւ ի կղզին Լիմն ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ Գէորգեայ զօրավարին. յիշեցէք զ(հայրապետ) Զաքարիա, որ զհաւատոս Հայոց նոր գնեաց ի յանաւրէն առաջնորդաց եւ զեկեղեցիքս ազատեաց Աստուծոյ տեսչութեամբն եւ ձեռաւքն իւրովք: Ընդ նմին եւ զառաջնորդս տեղւոյս յիշ. տէր Յօսաննէս ի թուիս 206» (Սրբանձառանց, Թորոս Աղբար, Կ. Պոլիս 1884, Բ., էջ 253). զոր հարկ է սրբազրել 206. քանի որ իշուած երեք անձերն ալ այդ ժամանակ կ'ապրին:

Զաքարիա կաթողիկոսի անունը սերտիւ կապուած է Լիմնի հետ: Կարող կաթողիկոսութեան Արծրունիի պատմութեան Շարունակողին համեմատ՝ Լիմնի հիմնադիրը եւ զայն պայծառացնողն է. «Շինեաց ի կղզին որ Լիմն կոչի, զգեղեցիկ եւ զլուսազդեաց զուճրեթաձեւ տաճար սրբոյն Գէորգեայ զօրավարին եւ բազում սպասիւք զարդարեաց եւ տուն աղօթից շինեաց եւ գոբղի բնակութեան եւ զարպասս եւ բազում կրօնաւորս կարգեաց եւ հաստատեաց» (Պատմ. Թովմ. Արծր., էջ 322): Մինչդեռ յիշատակարանի մը համաձայն, որ 1310ին զրուած աւետարանի մը մէջ կը գտնենք, ուրեմն ժամանակակիցի մը վկայութեան համեմատ Զաքարիա կաթողիկոս Ս. Գէորգի վերանորոգողն է «եւ ի թվականութեան Հայոց եօթն հարիւրերորդի, յիսներորդի, իններորդի ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսի տէր Յոսան, որ յառաջնորդութեան իւրում մեզ հանդիստ շնորհեաց... ընծայեցի զսա ի զուտն սուրբ Գէորգաց տաճարիս... զոր վերստին նորոգեաց բարի հովին եւ հովուապետն տէր Զաքարիա, որ կաթողիկոս ամենայն Հայոց» (Ազգբ. Հանդ., 1912, էջ 85): «Նօտարք»ի հեղինակն ունեցած է իր մօտ (Լիմն) արձանագրութիւնը, որուն համեմատ «207 թուին Զաքարիա նորոգեաց զայս տաճարն հոյակապ շինութեամբ». սակայն ցաւ է որ զայն տպագրութեան յանձնելու պատեհութիւնը չէ ունեցած (համատ. Փիրզալէմեան Դ. Վ., Նօտարք Հայոց, Կ. Պոլիս, էջ 175, ծն. 2): Այս տեղիքները նկատողութեան ասնելով կարելի է հաւատաւոր հետեւեցնել, որ Զաքարիա կաթողիկոս Ս. Գէորգի տաճարն այնքան մեծ փոփոխութիւններով կը նորոգէ, որ շինութեան կը հաւասարի եւ իրապէս Ս. Գէորգ

որ յառաջընթաց յիշատակարաններու մէջ իբրեւ երրորդական ու վերջինը կը յիշուէր՝ կարճ ատենէն առաջնորդութիւն կը զբաւէ եւ ստէպ Լիմնի անապատը պարզապէս Ս. Գէորգի անունով կը յիշուի: Այսպէս քիչ վերջ 1315ին կը գրուի Աստուածաշունչ մը «Գրեցաւ եւ կատարեցաւ... անարժան ձեռամբ սուտանուն Աբրահամու ի թվիս 207» (1315): Գրեցաւ ի կղզիս որ կոչի Լիմն, ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ աջիս նորակազմ տաճարիս ի հայրապետութեան տէր Զաքարի եւ յառաջնորդութեան տեղոյս տէր Յովաննիսի. թողութիւն հայցեցէք Աստուծոյ մեզ եւ մեր ննջեցելոցն եւ հաւրն իմոյ Յովսէփայ եւ եղբարց իմոց Յակովբայ եւ Սահակայ, որ երկասարգական կենաւք փոխեցան ի Բրիտանոս» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաքումն յիշատակարանաց, էջմ. 192. համատ. Կարինեան, Յուցակ, Թ. 182 եւ Ակիւնեան, Գաւազանագիրք կաթ. Աղթամարայ, էջ 52):

4. ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

Գուցէ Յովհաննէս եպիսկոպոսի մահէն յետոյ անոր տեղ Լիմն վանահայրութիւնը կը յանձնուի Սաչատուրի, որ յանձնառու կ'ըլլայ. եւ 1333ին⁴ կը գրէ Աւետարան մը: Ահա սոյն աւետարանի յիշատակարանը, որուն մէջ Սաչատուր ինքզինքը եպիսկոպոս կ'անունանէ:

... Ըստ նմին աւերինակի սրբապէր եւ հոգիխոնարհ Ահարոն միայնակեաց, որ միշտ եւ հանապաղ բորբոքէր ի սէր սուրբ եւ տիեզերաքարոյ քառալուսակ սուրբ աւետարանիս...: Տեսնչամբ ելեալ ի ինդիր աստուածունակ տառիցս որ կեանս տայ...: Ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց զօրձակցութեամբ եւ կամակցութեամբ Շատուրու կոչեցելոյ յիշատակ բարի իւրն եւ ծնօղացն ի իւրոց... եւ ես ամենամեղս եւ փցունս ի զրչաց անպիտան եպիսկոպոս Սաչատուր տեսեալ զիտաք եւ զսէր սոցա յանձն առեալ ըստ իմում կարի յանկ հանեալ կատարեցի շնորհօք եւ ողորմութեամբն Աստուծոյ յամի 206 (1333) երորդի թուաբերութեանս Հայոց: Ի հայրապետութեան Տեսոն Զաքարիայի զրեցաւ ձեռամբ մեղապարս զրչի ի Լիմն ի հոչակաւոր եւ ի մեծ անապատի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ Գէորգայ զաւարավարիս:

⁴ 1320ին կը յիշուի թէ «ի գուտն Լիմ սուրբ Գէորգայ, սորասար սաղաւարտ մի» կը արուի (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեւ. վասպ., էջ 182):

Արդ աղաչեմ զամենեսեան սիրոջն Աստուծոյ յիշել ի Բրիտանոս զԱհարոն ստացող սուրբ աւետարանիս եւ զծնօղան իւր եւ զամենայն...: Դարձեալ աղաչեմ յիշել զՇատուրուս միայնակեացն եւ ծնօղան իւր եւ զեղբարսն եւ զընկերակիցն իւր զՅովսէփ, զՄիթար եւ զայլն որք միախորհ են եւ միակօն հանդերձ ծնօղին: Ընդ սոցին եւ ես մեղապարսս ի զրչաց Սաչատուր եպիսկոպոս յիւրեւ անկեալ աղաչեմ զհանդիպողս ամա յիշել եւ զիմ անարժանութիւնս եւ զծնօղան իմ զեղբայրն իմ զհանդուցեալսն ի Բրիտանոս եւ զեղբայրսս եւ զղործակից եւ զսպասաւոր եւ զհարազատ եւ զղործակից եւ զսպասաւորս որ միշտ եւ հանապաղ մեզ կու սպասաւորէ որ միշտ եւ հանապաղ մեզ կու սպասաւորէ... (Քօսեան, Յուց. Արծ. վարանարտունջ... (Քօսեան, Յուց. Արծ. վար. Կարնոյ, Թ. 28, էջ 82—84. — հրտ. Հ. Ն. Ակիւնեան, Գաւազանագիրք կաթ. Աղթամարայ, Վիեննա 1920, էջ 57):

Ասկէ վերջ զրեթէ վաթսուն տարիի պատմութիւն մը կը մնայ անյայտ: Պիտի թուին (1394) Լիմնի մէջ կը գրուի Գանձուց զերբ մը կամ Գանձարան մը⁵ «Գրեցաւ Գանձարանս ի Լիմն կղզիս ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ զեցկաչէն տաճարիս, յամի Պիտի, յորում զեցկաչէն տաճարիս, յամի Պիտի շարժեամբ աստուածաստութեան բարկութիւն շարժեցաւ ի վերայ երկրի, արեւնարբու Լանկիթամուր թարին, որոյ անուն զլիւսաւորին Լանկիթամուր կոչուի, յորոյ անուն զլիւսաւորին մեր առ ոտս կոչուի, յորոյ սարսից զերծեալ մեր առ ոտս երջանիկ վարժապետին Սարգիսի ի Լիմն կղզիս» (Ինձիճեան Հ. Ղ., Ստորագրուկ թիւն հին Հայաստանեաց, Վիեննա 1822, էջ 228. համատ. Նօտարք, էջ 5):

Թովմաս Մեծոփեցիին Աքանտարի զօրքերէն կը վախճի եւ կ'ապաստանի Լիմ, ուր իր վկայութեան համաձայն «տեղի ոչ գտաք իր վկայութեան համաձայն կերանոց եւ յորեպոս կերանոցիս եւ յառնելոյ եւ ոչ զորեպոս կերանոցիս» (Պատմ., էջ 87): Այդպէս պատրաստելոյ Յովհաննէս վարդապէս ըլլալով հանդերձ Յովհաննէս վարդապետ զինքը եւ միւս փախստականները պարզաներու ներածին չափ լաւ կը հիւրընկալէ: Ամկայ չար իշխանը՝ Հաջի պէկ զանոնք կը հետապնդէ եւ կղզին հասնելով ժողովուրդն այնքան սաստիկօրէն կը տատապեցնէ որ «յասէ նոցա կամէաք զի ծոփն ընկղմէր տեսանելով զաղաղակ եւ զճիշ կանանց զմեզ՝ տեսանելով զաղաղակ եւ զճիշ կանանց

⁵ 1392ին գրուած Աւետարան մը թարգման կը նուիրէ Լիմնի (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեւ. վասպ., էջ 228):
⁶ Այս շրջաններուն կարճ ժամանակով ի Լիմ կը նստի Սահականոս քահանայ Ամկեցի, համատ. Թովմ. Մեծոփ., էջ 112 եւ Նօտարք, էջ 6:

եւ որդւոց նոցա, վասն զի հարկանէին եւ իրաձեծ առնէին զնոս» (Անդ, էջ 88):

Յովհաննէս առաջնորդ 1421ին Լիմնի մէջ կը կանդնէ խաչքար մը. «Կանդնեցաւ խաչս յերանշաշ բարեխօս առ Աստուած տէր Յովհաննէս եպիսկոպոսի եւ հարազատին իւրոյ Յովաննէսին հանդուցելոյն ի Բրիտանոս, այլ եւ կանդնողացն Սաղազութեանն եւ Կարապետին ամէն թվ. ՊՉ (1421, Նօտարք, էջ 64, ուր ծն. 1 կը գիտուի «Յովհաննէս մեռել յարոց կոչեցելոյ, Լիմ անապատի վանահօր. կից հիման տաճարին է գերեզման սորին ի հարաւ կուտէ արտաքուստ»): Հաւանօրէն սոյն Յովհաննէս է որ Յովսէփի միայնակեացի հետ «ի ծովահայեաց անապատս» գրուած աւետարան մը կը նուիրէ Ս. Գէորգայ 1439ին (համատ. Լաւայեանց, Յուց. հայ. Ձեւ. վասպուրականի, էջ 381—382): Քանի մը տարի վերջ Իգնատիոս արեղան Կիրակոս կրօնաւորի աղաչանքով կը սկսի Կաթողիկէ թղթերու արտագրութիւնը Սուխարայ վանքի մէջ, բայց քաղաքական դժբախտ անցքերու հետեւանքով կ'ամբանայ «յանաւիկ կղզիս Լիմն կոչեցեալ» եւ հոս զայն կ'աւարտէ (Նօտարք, էջ 175): Այս շրջաններուն (1452—1457) Ղաղարիկ Լիմնի մէջ կ'աւարտէ Յայամաւորքի մաս մը (համատ. Աճառեան Հ., Յուցակ հայ. Ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա 1910, էջ 103): Հաւանօրէն քաղաքական անպատ պարագաներ, զորոնք կ'ակնարկէ Իգնատիոս արեղան (համատ. Նօտարք, էջ 175) Լիմն վրայ եւս կ'աղղեն եւ կ'անջքանայ⁸: Սակայն երեք քառորդ զար վերջ կեանքը նորէն կը սկսի իր ցոլքերը տալ: 1526ին ի Լիմ կը կազմուին Աղուէսագիրք մը (Պալեան, Յուց. հայ. Ձեռագրաց Ս. Սիոն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց Մազնիս, Թ. 3, էջ 14—15) ու Շարակիոց մը (Մամուլ, 1897, էջ 242) եւ 1533ին⁹ Յովսէփ կը գրէ Մաչթոց մը «ի ծովամիջակ անապատիս, որ կոչի Լիմ»

⁷ Փիրալի իշխանն ալ Լիմ ապաստանողները կը նեղէ (համատ. Թ. Մեծոփ. Պատմ., էջ 111):
⁸ 1463ին կը գրուի սա արձանագրութիւնն ի Լիմ «ես թումայ հերպետս կանդնեցի զիտա քառախաւս առ Աստուած ինձ եւ ծնօղաց իմոց, որք երկրպագէք յիշեցէք ի Բրիտանոս ԶԹԲ» (Ազգբ. Հանդ., 1912, էջ 92):
⁹ 1534ին Շահթամաղի ստպատակութիւններու ժամանակ բաւական թուով անձինք կ'ապաստանին ի Լիմ, ուր Իգնատիոս գրիչ իր արտագրութիւնը կը շարունակէ «ընդ հովանեաւ զեղեցկաչէն եւ հրաշաքօրձ տաճարիս, որ յանուն սրբոյն Գէորգայ»: 1538ին ալ Գոգլայ սուլթանին զօրքերը Լիմ կը մտնեն եւ զԲազար մատանները կ'այրեն կամ ծով կը նետեն» (Ազգբ. Հանդ., 1912, էջ 86): Բայց ետէն նորէն զրքեր կը հաւաքուին (Արարատ, 1898, էջ 400):

